ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1568

18.08.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը հիմք ընդունելով Ձեր 14.07.2015թ-ի թիվ 2/2-1-2293 գրությամբ տրված մեկնաբանության վերջին պարբերությունը <<*Միաժամանակ հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ՀՀ ոստիկանությանը իրենց աշխատանքները խոչընդոտելու, պաստառները միտումնավոր հանելու մեջ անհիմն և ավելորդ մեղադրանքներ չներկայացնելու համար՝ ՀՀ ոստիկանությանը ընդառաջելով Ձեր խմդրանքին, այլ ոչ թե պահանջին, իր պատրաստակամությունն է հայտնում ՁՊՎ-ներ ունեցող տարածքային ստորաբաժանումների նախասրահներում փակցնել դիտորդական խմբի <<Թեժ գծի>>* հեռախոսահամարը և մարդու իրավունքների պաշտպանությունը հնարավորինս պահպանելու նպատակով և համապատասխան վարչության հետ վերը նշված տեղեկատվություն պարունակող ձևաչափը համաձայնության բերելով 14.08.2015թ-ին հերթական այցելության ընթացքում ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային ստորաբաժանումներում փորձեց համապատասխան տեղեկություն պարունակող Դիտորդական խմբի գործունեության վերաբերյալ գրառումը փոխանցել բաժինների պատասխանատուներին, որպեսզի փակցնեն Ձեր իսկ կողմից նշված ՁՊՎ-ներ ունեցող ստորաբաժանումների նախասրահներում:

Ցավով ենք նշում, որ համապատասխան ստորաբաժանման պատասխանատու ոստիկանները զանգ կատարելուց և համապատասխան հանձնարարական ստանալուց հետո հրաժարվեցին փակցնել Դիտորդական խմբի մասին տեղեկատվություն պարունակող գրառումը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍ
մուտք № 3804
18 08 15

5442
18 08 15

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Այսպիսով խնդրում ենք տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ և համապատասխան միջոցներ ձեռնարկել հետագայում նմանատիպ տհաճ միջադեպերից խուսափելու համար:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2828 <<27>> 08 2015թ

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի պատասխան Ձեր 18.08.2015թ. թիվ 2621/1568 գրության հայտնվում է, որ ՀՀ ոստիկանությունը 14.07.2015թ. թիվ 2/2-1-2293 գրությամբ հայտնել է իր պատրաստակամությունը ՁՊՎ ունեցող տարածքային ստորաբաժանումների նախասրահներում փաքցնել դիտորդական խմբի <<Թեժ գծի>> հեռախոսահամարը:

Հիշյալ գործընթացը կազմակերպելու համար ՀՀ ոստիկանությունը առաջարկում է դիտորդական խմբին գրավոր ձևով ներկայացնել իր դիրքորոշումը վերոգրյալի կապակցությամբ և դրական լինելու դեպքում տրամադրել համապատասխան թվաքանակի պաստառներ, որտեղ նշված կլինեն դիտորդական խմբի <<Թեժ գծի>> հեռախոսահամարը՝ տարածքային ստորաբաժանումներին տրամադրելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբ